ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 13 >> 08 2017թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: ______________ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ ՇԻՆԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ շինարարներ

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Շինարարի օրվա կապակցությամբ:

Շինարարի մասնագիտությունն այն եզակիներից է, որը վայելում է մեր ժողովրդի սերն ու հարգանքը: Ձեր ուժերով կյանքի են կոչվում մի շարք պետական ծրագրեր, վերականգնվում են Գյումրու պատմամշակութային արժեքները, նորոգվում ճանապարհներ, կոմունալ-կենցաղային ենթակառուցվածքներ:

Նախկին աղետի գոտին այսօր հրապուրում է ներդրողների, գրավում գործարարների: Վեր բարձրացող ամեն մի շինություն սերունդներին կփոխանցի կառուցող ու երկիր շենացնող շինարարի անունը:

Հայ շինարարը ի զորու է հիացնել աշխարհին: Կառուցեք՛ որակով և խղճի մտոք:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ